

Ի՞նչ են «ծախսերը»:

Նույնիսկ եթե ձեր եկամուտը չափազանց բարձր է ձեր նահանգում Medicaid-ի համար իրավասու լինելու համար, դուք դեռ կարող եք իրավասու լինել Medicaid-ի համար որպես «Բժշկական կարիք ունեցող», եթե ձեր բժշկական ծախսերը գերազանցում են ձեր հասանելի եկամուտը: Երբ հանելով ձեր բժշկական ծախսերը և ծախսերի բաշխումը (օրինակ՝ համաժճարները) ձեր եկամուտը նվազեցվում է այն մակարդակի, որը թույլ է տալիս մասնակցել Medicaid-ին այս գործընթացը կոչվում է «ծախսեր»:

Որպես «բժշկական առումով կարիքավոր» իրավասու լինելու համար ձեր ռեսուրսները (օրինակ՝ խնայողական հաշիվները և ավանդի վկայականները) պետք է ավելի ցածր լինեն, քան ձեր նահանգի սահմանաչափը: Չանգահարեք Medicaid-ի հարցերով Ձեր նահանգային գրասենյակ՝ պարզելու Ձեր իրավասու լինելու հարցը և իմանալու, թե ինչպես դիմել:

Իմացեք ձեր իրավունքների մասին

- Եթե ձեզ մերժել են Medicaid-ի նպաստները և համաձայն չեք այս որոշման հետ, կարող եք բողոքարկել:
- Medicaid ունեցող մարդիկ իրավունք ունեն իրենց առողջական գրառումները գաղտնի պահելու:
- Medicaid-ը պետք է ապահովագրի և կազմակերպի բազմաթիվ բժշկական առումով անհրաժեշտ ծառայություններ Medicaid-ի իրավունք ունեցող երեխաների համար, նույնիսկ եթե նահանգը սովորաբար չի ծածկում ծառայությունները իր Medicaid ծրագրի շրջանակներում:

Դուք իրավունք ունեք ստանալ Medicare-ի մասին տեղեկատվությունը հասանելի ձևաչափով, ինչպես օրինակ՝ մեծ տպագրությամբ, Բրայլի կամ ձայնագրության տեսքով: Դուք նաև իրավունք ունեք բողոք ներկայացնելու, եթե կարծում եք, որ ձեր նկատմամբ խտրականություն է կիրառվել: Այցելեք [Medicare.gov/about-us/accessibility-nondiscrimination-notice](https://www.medicare.gov/about-us/accessibility-nondiscrimination-notice) ,կամ զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227)՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:

Որտեղի՞ց կարող եմ ավելի մանրամասն տեղեկություններ ստանալ:

- **Պարզելու համար, թե արդյոք դուք կամ ձեր ընտանիքի անդամը իրավասու եք Medicaid-ին** այցելեք [Medicare.gov/talk-to-someone](https://www.Medicare.gov/talk-to-someone)՝ ձեր նահանգի Medicaid գրասենյակի հեռախոսահամարը ստանալու համար: Նախ, ընտրեք ձեր նահանգը՝ «Ի՞նչ նահանգում եք ապրում» բացվող ցանկից, այնուհետև կտտացրեք «Անցնել»: Դուք կտեղափոխվեք մի էջ, որտեղ կան կոնտակտային տվյալներ, որոնք հաստուկ են ձեր նահանգին: Այնուհետև այս էջի ձախ պոնակում ընտրեք «Այլ ապահովագրական ծրագրեր» (“Other insurance programs”) և ընտրանքների ցանկի հղման տակ գտեք «Medicaid program» տեքստը: Դուք կարող եք նաև զանգահարել 1-800-MEDICARE (1-800-633-4227)՝ ձեր նահանգի Medicaid գրասենյակի հեռախոսահամարը ստանալու համար: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:
- Այցելեք [HealthCare.gov/medicaid-chip](https://www.HealthCare.gov/medicaid-chip) կամ [Medicaid.gov](https://www.Medicaid.gov)՝ Medicaid-ի մասին ավելին իմանալու համար:

9-ից 64 տարեկան մեծահասակները, ովքեր չունեն երեխաներ կամ հաշմանդամություն և ունեն մինչև \$1,7774 (1 անձի համար) կամ \$36,570 (4 հոգանոց ընտանիքի համար) եկամուտ 2021 թվականին, կարող են որակավորվել Medicaid-ի համար: Եկամտի մակարդակն ավելի բարձր է գույգերի կամ երեխաներ ունենալու դեպքում: Medicaid-ին համապատասխանելու համար չափազանց բարձր եկամուտ ունեցող ընտանիքների երեխաները կարող են իրավասու լինել գրանցվելու իրենց նահանգի Երեխաների առողջության ապահովագրության ծրագրին (Children’s Health Insurance Program, CHIP): Եթե դուք այժմ գրանցված եք Medicaid-ում, ապա ձեզ հարկավոր չէ որևէ նոր բան անել: Medicaid-ի շրջանակներում ձեր ապահովագրության, իրավունքների և պաշտպանության վերաբերյալ հիմնական կանոնները չեն փոխվում: Կապվեք ձեր նահանգային Medicaid-ի գրասենյակի հետ կամ այցելեք [HealthCare.gov](https://www.HealthCare.gov)՝ ավելին իմանալու ձեր և ձեր ընտանիքի ապահովագրման տարբերակների մասին:

«Medicaid ծրագիր ինչպես սկսել» իրավական փաստաթուղթ չէ: Medicaid ծրագրի պաշտոնական իրավական ուղեցույցը ներառված է համապատասխան օրենքներում, կանոնակարգերում և որոշումներում:

Medicaid



ԻՆՉՊԵՍ ՍԿՍԵԼ



Հասկացեք Medicaid-ի ծրագրի հիմունքները

Եկեք սկսենք

Ի՞նչ է Medicaid-ը:

Medicaid-ը դաշնային և նահանգային համատեղ ծրագիր է, որն բժշկական ծախսերի մասով օգնություն է տրամադրում սահմանափակ եկամուտ և միջոցներ ունեցող որոշակի անձանց: Medicaid-ը կարող է նաև առաջարկել նպաստներ, որոնք սովորաբար չեն փոխհատուցվում Medicare-ի կողմից, ինչպես օրինակ՝ ծերանոցային խնամքը և անձնական խնամքի ծառայությունները: Եթե ունեք Medicare, ինչպես նաև իրավասու եք Ձեր նահանգում Medicaid ծրագրին, Դուք ավտոմատ կերպով իրավասու եք նաև Ձեր՝ Medicare դեղատոմսով տրվող դեղերի ապահովագրական ծածկույթը վճարելու լրացուցիչ աջակցության համար:

Ինչպե՞ս է դա աշխատում:

Դաշնային լայն ուղեցույցների շրջանակներում յուրաքանչյուր նահանգ որոշում է, թե ինչպես վարել իր Medicaid ծրագիրը, ներառյալ այն, ինչը համարվում է եկամուտ և ռեսուրս, ով է իրավասու, ինչ ծառայություններ են ապահովագրվում և ծառայությունների արժեքը: Որոշ նահանգներ օգտագործում են տարբեր անուններ իրենց Medicaid ծրագրերի համար, ինչպիսիք են Medi-Cal-ը Կալիֆորնիայում կամ TennCare-ը Թենեսիում:

Ինչպե՞ս կարող եմ ստանալ Medicaid:

Եթե դուք չեք կարող ձեզ թույլ տալ վճարել ձեզ անհրաժեշտ բժշկական խնամքի համար, դուք պետք է դիմեք Medicaid-ի համար այն նահանգում, որտեղ ապրում եք: Պետությունները որոշում են ձեր կարիքը՝ ելնելով ձեր եկամուտից և ռեսուրսներից: Ձեր եկամուտը և ռեսուրսները հաշվելու կանոնները տարբեր են կախված նահանգներից: Ռեսուրսները ներառում են այնպիսի բաներ, ինչպիսիք են գումարը չեկային կամ խնայողական հաշվին, բաժնետոմսերը և պարտատոմսերը: Կան նաև հատուկ կանոններ ծերանոցներում ապրող մարդկանց և տանը ապրող հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Եթե դուք դիմում եք և ձեզ հաստատում են Medicaid ծրագրի համար, դուք կստանաք հաստատման նամակ, ինչպես նաև կարող եք ստանալ քարտ, որը կօգտագործեք առողջապահական խնամք ստանալու ժամանակ:



Ինչպե՞ս կարող եմ իմանալ՝ արդյոք ես որակավորվում եմ:

Բացի սահմանափակ եկամուտ և ռեսուրսներ ունենալուց, կան նաև այլ պահանջներ, որոնք դուք պետք է բավարարեք ձեր նահանգի համար: Երբ դուք դիմում եք, ձեզ կարող են տրվել այս հարցերը, որոնք կօգնեն որոշել ձեր Medicaid իրավասությունը.

- Քանի տարեկան եք:
- Արդյո՞ք հղի եք:
- Դուք կամ ձեր երեխան մինչև 19 տարեկա՞ն է: * Թե՞ դուք Medicaid-ով երեխայի խնամողն եք:
- Դուք հաշմանդամություն կամ կուրություն ունե՞ք:
- Դուք ԱՄՆ քաղաքացի՞, թե ներգաղթյալ լ եք, որը համապատասխանում է որոշակի պահանջներին:
- Դուք ներկայումս 26 տարեկանից ցա՞ծ եք և մինչ Ձեր 18-ամյակը եղե՞լ եք խնամատարության մեջ:

Նշում՝ Դուք կարող եք որակավորվել Medicaid-ի «ծախսերի» կանոնների ներքո (որը նկարագրված է ավելի ուշ այս գրքույկում), նույնիսկ եթե ձեր եկամուտը ավելի բարձր է, քան ձեր նահանգի Medicaid-ի եկամտի մակարդակը:

Ի՞նչ եմ վճարում:

Այն, ինչ դուք վճարում եք ծածկույթի համար, կախված է ձեր նահանգի կանոններից: Հնարավոր է՝ կվճարեք ձեր առողջապահական ծախսերի մի փոքր մասը (օրինակ՝ համավճարը): Եթե դուք որակավորվում եք և՛ Medicare-ի, և՛ Medicaid-ի համար, ձեր առողջապահական խնամքի և դեղատոմսով տրվող դեղերի ծախսերի մեծ մասը կփոխհատուցվի:

Ի՞նչն է ծածկվում:

Medicaid-ը հիմնականում ծածկում է.

- Ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ
- Ամբուլատոր հիվանդանոցային ծառայություններ
- Հղիության հետ կապված ծառայություններ
- Պատվաստանյութեր երեխաների համար
- Բժշկի ծառայություններ
- Դեղատոմսով բացթողնվող դեղ
- Բուժքույրական հաստատության ծառայություններ
- Ընտանիքի պլանավորման ծառայություններ և պարագաներ
- Գյուղական առողջապահական կլինիկայի ծառայություններ
- Տնային պայմաններում մատուցվող առողջապահական ծառայություններ
- Լաբորատոր հետազոտություններ և ռենտգեն ծառայություններ
- Մանկական և ընտանեկան բուժքույրի ծառայություններ
- Բուժքույր մանկաբարձի ծառայություններ
- Դաշնային որակավորում ունեցող առողջական կենտրոնի ծառայություններ
- Ծառայությունների լայն շրջանակ մինչև 21 տարեկան երեխաների համար
- Պահանջվող փոխադրում դեպի առողջապահական ծառայություններ մատուցողներ և այնտեղից

Նշում՝ Նահանգները կարող են ընտրել ավելի շատ ծառայություններ, քան վերը թվարկվածները: Ձեր նահանգի կողմից ապահովագրվածի ցանկի համար դիմեք Նահանգային բժշկական օգնության (Medicaid) գրասենյակ: Այցելեք [Medicare.gov/talk-to-someone](https://www.medicare.gov/talk-to-someone) կամ զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227)՝ ձեր նահանգային Medicaid գրասենյակի հեռախոսահամարը ստանալու համար: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով: Այցելեք [Medicaid.gov](https://www.Medicaid.gov) կամ [HealthCare.gov](https://www.HealthCare.gov)՝ ծանոթանալու ձեր և ձեր ընտանիքի ապահովագրման տարբերակներին: